

## Չարլզ Պոնցի: Ֆինանսական բուրգի կնքահայրը

...ես ցույց տվեցի լավագույն շոուն

Սամվել Չափարյան, «Գանձվեն Ֆայնեշլ» փոխնախագահ



Այսօր յուրաքանչյուր խարդախություն, որ կառուցված է նախորդ ներդրողներին ապագա ներդրողների ներդրումներից վճարելու սկզբունքի վրա, անվանում են «Պոնցիի սխեմա»:

Առաջին ֆինանսական բուրգը դա միջազգային փոստային կտրոնների հետ էր, երբ արբիտրաժային գործարքներ կատարելու միջոցով Չարլզ Պոնցին իր հաճախորդներին խոստանում էր 50 տոկոս շահույթ 45 օրում, կամ էլ 100 տոկոս շահույթ՝ 90 օրում:

### Կյանքը մինչև Ամերիկան

Ամերիկայի պատմության ամենամեծ խաբեբաներից մեկը՝ **Չարլզ Պոնցին** ծնվել է 1882թ-ի մարտի 3-ին Իտալիայի Լուզո քաղաքում:

Հռոմի Լա-Սապիենցա Համալսարան ընդունվելուց առաջ նա կարճ ժամանակ աշխատել է փոստային գրասենյակում: Չարլզը համալսարանը համարում էր «չորս տարի արձակուրդ», և իր համալսարանական տարիները հիմնականում անցկացրեց սրճարաններում, բարերում և օպերաներում:

### Ամերիկայում

1903թ-ի նոյեմբերի 15-ին Պոնցին ժամանեց Բոսթոն՝ գրպանում ունենալով միայն 2.5 դոլար. կյանքի ընթացքում կուտակած գումարի մնացած մասը տանուլ տալով ճանապարհորդության ընթացքում: «Ես եկա այս երկիր 2.5 դոլար կանխիկով և 1 միլիոն դոլարի հույսով, և այս հույսը երբեք ինձ չի լքել.» – ասել է նա:

Նա արագ սովորեց անգլերեն և մոտակա մի քանի տարին վատնեց արևմտյան ափին՝ զբաղվելով տար-

բեր պատահական գործերով: Օրինակ, աշխատեց ռեստորանում որպես աման լվացող, որտեղ նա բնում էր հատակին: Նա կարողացավ հասնել մատուցողի պաշտոնի, սակայն հեռացվեց հաճախորդներին խաբելու և գողություն անելու պատճառով:

1907թ-ին Պոնցին տեղափոխվեց Մոնրեալ և դարձավ գանձապահի օգնական նորաբաց Banco Zarossi բանկում, որը հիմնադրել էր Լուիջի «Լյուիս» Չառոսսին՝ իտալացի ներգաղթածների հոսքը սպասարկելու նպատակով: Չառոսսին բանկային ավանդներին վճարում էր 6% եկամուտ, այսինքն երկու անգամ ավել, քան ընթացիկ դրույթաչափերն էին, և արդյունքում բանկը արագորեն աճում էր: Սակայն Պոնցին հայտնաբերեց, որ բանկը գտնվում է ծանր ֆինանսական դրության մեջ, կասկածելի հիպոթեթային վարկերի պատճառով և, որ Չառոսսին ապահովում էր տոկոսների վճարումը ոչ թե ներդրումներից ստացված շահույթից, այլ օգտագործելով նոր բանկային հաշիվներին դրված գումարները: Ի վերջո բանկը սնանկացավ և Չառոսսին փախավ Մեքսիկա՝ իր հետ տանելով բանկի գումարների մեծ մասը:

Պոնցին մնաց Մոնրեալում և միառժամանակ ապրեց Չառոսսիի տանը՝ նրա լքված ընտանիքին օգնելու համար: Այդ ընթացքում նա մշակում էր Միացյալ Նահանգներ վերադառնալու և ամեն ինչ նորից սկսելու իր ծրագրերը: Զանի որ Պոնցին անգամ դրամ չունեի գրպանում, դրանք իրականացնելը շատ բարդ խնդիր էր: Ի վերջո նա գնաց Չառոսսիի նախկին հաճախորդներից մեկի գրասենյակ և, տեսնելով այն ամայի, ինքն իր անունով դուրս գրեց 423.58 դոլարի վճարագիր՝ կեղծելով ընկերության տնօրենի ստորագրությունը: Կեղծված վճարագրի օգտագործումից անմիջապես հետո ոստիկանությունը ենթարկեց նրան պատասխանատվության: Բռնելու պահին Պոնցին բարձրացրեց ձեռքերը և ասաց, «Ես մեղավոր եմ» և երեք տարի անցկացրեց բանտում, ուղարկելով մորը նամակ, որտեղ հաղտնում էր, որ աշխատում է որպես բանտի հսկիչի «հատուկ օգնական»:

1911թ-ին բանտից ազատվելուց հետո նա որոշեց վերադառնալ Միացյալ Նահանգներ, բայց ներգրավվեց իտալացի ներգաղթացների ապօրինի սահմանահատման գործարքների մեջ: Նա բռնվեց և ծախսեց ևս երկու տարի Ատլանտայի բանտում:

### Պոնցիի սխեման

Ֆինանսական բուրգ կառուցելու գաղապարը առաջին անգամ ծագեց, երբ Պոնցին դուրս եկավ բանտից: Նա ստացավ մի նամակ Իսպանիայում գտնվող ընկերությունից: Ծրարի մեջ նա գտավ Միջազգային փոստային կտրոն (ՄՓԿ), որը նա երբևիցե չէր տեսել: Նա հետաքրքրվում է այդ համակարգով և գտնում նրա թույլ կողմը, որը տեսականորեն հնարավորություն էր տալիս գումար վաստակել:

Փոստային կտրոնի նպատակն էր այլ երկրում գտնվող մարդուն հնարավորություն տալ նամակ ուղարկել համապատասխան երկիր, չկատարելով փոստային ծախսեր պատասխանի համար: ՄՓԿ-ների արժեքը որոշվում էր գնման երկրում առկա փոստային ծախսերին հավասար, բայց դրանք կարող էին փոխանակվել նամականիշերի այն երկրում, որտեղ օգտագործվում էին այդ երկրի փոստային ծախսերը ծածկելու համար: Եթե այս ծախսերի արժեքը տարբերվում էր, ապա գոյություն ուներ պոտենցիալ շահույթի հնարավորություն: Առաջին համաշխարհային պատերազմից հետո գնաճը Էսպես իջեցրել էր փոստային ծախսերի արժեքը Իտալիայում՝ արտահայտված ԱՄՆ դոլարով: Հետևապես, կարելի էր Իտալիայում էժան գնել ՄՓԿ-ներ և փոխանակել դրանք ԱՄՆ-ում ավելի բարձր արժեք ունեցող նամականիշերի:

Գործընթացը հետևյալն էր՝ գումարը ուղարկվում է արտերկիր, գործակալները գնում են ՄՓԿ-ներ, ուղարկում են այդ ՄՓԿ-ները ԱՄՆ, այստեղ այդ ՄՓԿ-ները փոխանակվում են ավելի բարձր արժեք ունեցող նամականիշերի, նամականիշերը վաճառվում են: Պոնցին հայտարարում էր, որ այս գործարքների մաքուր շահույթը կլինի ավելի քան 400%: Սա արբիտրաժի տեսակ էր, այսինքն ակտիվի գնում ցածր գնով մի շուկայում և դրա անմիջապես վաճառք այլ շուկայում, ավելի բարձր գնով, ինչը լիովին օրինական գործարք է:

Տեսնելով այս հնարավորությունը Պոնցին սկսեց կյանքի կոչել իր սխեման: Նա պարտքով գումար վերցրեց և ուղարկեց այն Իտալիայում բնակվող իր բարեկամներին, որպեսզի նրանք գնեն փոստային կտրոններ և ուղարկեն դրանք իրեն: Շուտով Պոնցին հիմնեց իր սեփական ընկերությունը՝ «Security Exchange

Company,» որի նպատակն էր խթանել իր սխեման:

Լուրերը տարածվում էին, և ներդրումների հոսքը աճում էր բարձր տեպմերով: Պոնցին գործի էր վերցրել գործակալներ և տալիս էր նրանց մեծ վարձատրություն բերած յուրաքանչյուր դոլարի համար: 1920թ-ի փետրվարի դրությամբ Պոնցին «որսացել» էր 5000 ԱՄՆ դոլար, ինչը համարժեք է 54000 ԱՄՆ դոլարի 2008թ-ին:

Մարտին ևս ուներ 30000 ԱՄՆ դոլար (328000 ԱՄՆ դոլար 2008թ-ի ցուցանիշներով): Խելագարությունը աճում էր, և Պոնցին վարձեց Նոր գործակալների, որոնք պետք է գումար հավաքեին ամբողջ Նոր Անգլիայից և Նյու Ջերսիից: Այդ ժամանակ ներդրողները ստանում էին տպավորիչ շահույթ և քաջալերում էին մյուսներին ներդնել գործի մեջ:

1920թ-ի մարտին ևս վաստակել էր 420000 ԱՄՆ դոլար (4,59 միլիոն ԱՄՆ դոլար 2008թ-ի դրությամբ): Հուլիսին ևս ուներ միլիոններ: Մարդիկ գրավ էին դնում իրենց տները և ներդնում իրենց կյանքի ինսայդ-դրությունները: Շատերը չէին ստանում իրենց շահույթը, սակայն շարունակում էին ներդնել:

Չնայած, որ արտաքինից գործերը ընթանում էին հիանալի, պարզագույն ֆինանսական վերլուծությունը ցույց կտար, որ ընկերությունը մեծ կորուստներ է կրում: Մինչդեռ գումարները շարունակում էին հոսել, ներկա ներդրողները ստանում էին իրենց եկամուտը Նոր ստացված գումարներից: Փաստորեն, Նոր գումարները Պոնցիի միակ միջոցն էին այդ ներդրողներին վճարելու համար, քանի որ ևս չէր ցանկանում շահույթ վաստակել օրինական ճանապարհներով:

Պոնցին շքեղ էր ապրում. ևս մեծ առանձնատուն էր գնել Լեքսինգտոնում՝ Մասաչուսեթսում օդափոխությամբ և տաքացվող լողավազանով:



Պոնցիի առանձնատունը գոյություն ունի մինչ այժմ, կառուցված 1923, 13 սենյակ և 7 ննջարան:

## Կասկածանք

Պոնցիի այդպիսի արագ աճը բնականաբար կասկածներ էր առաջացնում: Սակայն, երբ մի բոսթոնցի ֆինանսիստ ենթադրեց, որ Պոնցին չէր կարող կարճ ժամանակում վաստակել այդքան մեծ գումարներ օրինական կերպով, Պոնցին դիմեց դատարան գրպարտանքի համար և շահեց 500000 ԱՄՆ դոլար պատճառած վնասի համար:

Չնայած դրան կային նաև գործի փլուզման այլ նշաններ: Բոսթոնցի մի կահույքավաճառ, Ջոզեֆ Դենիելը, որը Պոնցիին կահույք էր տվել, երբ նա չէր կարողացել վճարել դրա համար, դիմել էր Պոնցիի դեմ դատարան: Դատական գործը արդյունք չտվեց, սակայն մարդկանց սկսեցին հարցնել, թե ինչպես է Պոնցին կարողացել այսքան կարճ ժամանակում դառնալ միլիոնատեր՝ ի սկզբանե լինելով աղքատ: Մարդիկ մասսայաբար սկսեցին պահանջել իրենց գումարները ընկերությունից: Պոնցին վճարեց այդ ներդրողներին և մարդկանց հոսքը կանգ առավ:

Չնայած այս կարճատև դադարին, Boston Post-ի տերը, Ռիչարդ Գրոգիերը, և թերթի բաժիններից մեկի խմբագիրը, Էդի Դանը, դեռ կասկածների մեջ էին և հանձնարարեցին հետաքննիչ լրագրողներին ստուգել Պոնցիին: Նա նաև քննության էր առնված Մասաչուսեթսի իշխանությունների կողմից և Post-ի հոդվածի տպագրման օրը Պոնցին հանդիպել էր պետական ծառայողների հետ: Նրան հաջողվեց համոզել պաշտոնյաներին չանցկացնել ստուգումներ իր հաշվապահությունում՝ առաջարկելով դադարեցնել գումարների հավաքագրումը հետաքննության ընթացքում: Պոնցիի առաջարկը ժամանակավորապես հանգստացրեց պետական ծառայողների կասկածները:

Այդ ժամանակ Պոնցին աշխատում էր օրեկան 250000 ԱՄՆ դոլար:

## Սխեմայի փլուզումը

Հուլիսի 26-ին Post-ը սկսեց տպագրել հոդվածների շարք, որոնք ծանր հարցեր էին առաջ բերում Պոնցիի փողի մեքենայի առնչությամբ: Պոնցիի սխեման ուսումնասիրելու նպատակով Post-ը կայնվեց Կլեմենս Բառնի հետ՝ ֆինանսական վերլուծաբանի, որը հրապարակում էր ֆինանսական թերթ: Բառնը նկատեց, որ չնայած Պոնցին առաջարկում էր ֆանտաստիկ եկամուտներ, ինքը Պոնցին երբեք չէր ներդնում սեփական ընկերության մեջ:

Այնուհետև Բառնը նկատեց, որ Պոնցիի ընկերության ունեցած ներդրումները ապահովելու համար պահանջվում էր 160 միլիոն փոստային կտրոն, այնինչ շրջանառության մեջ գտնվում էր միայն 27000: Միացյալ Նահանգների Փոստային Ծառայությունը հաստատեց, որ փոստային կտրոններ երբևէ մեծ քանակով չեն ներմուծվել կամ արտահանվել: Յուրաքանչյուր ՄՓԿ-ի առթից և վաճառքից գոյացած համախառն շահութաբերությունը տոկոսներով հսկայական էր, սակայն, հաշվի առնելով դրանց չափազանց ցածր գինը և այն, որ դրանք վաճառվում են առանձին-առանձին, դրանց գնման և մարման համար պահանջվող վերադիր ծախսերը գերազանցում էին համախառն շահույթը:

Պոնցիի ընկերության շուրջ սկսվեց պանիկա: Երեք օրում Պոնցին վճարեց կատաղած ամբոխին 2 միլիոն ԱՄՆ դոլար և ուրախությամբ ասաց նրանց, որ անհանգստանալու պատճառներ չկան: Շատերը փոխեցին իրենց մտադրությունը և թողեցին գումարները Պոնցիի մոտ:

Այդ ժամանակ Պոնցին վարձեց գովազդային գործակալի, Ուիլյամ ՄակՄաստերսին: Սակայն Պոնցիի անդադար խոսակցությունները փոստային կտրոնների և ընթացիկ հետաքննության մասին շատ շուտ ստիպեցին ՄակՄաստերսին չվստահել իրեն: Հետագայում նա նկարագրեց Պոնցիին, որպես «ֆինանսական հիմարի,» որը հավանաբար չգիտի անգամ գումարել:

Պոնցիի պատմության վերջաբանը սկսվեց հուլիսի վերջում, երբ ՄակՄաստերսը հայտնաբերեց մի քանի փաստաթուղթ, որոնք ցույց էին տալիս, որ Պոնցին պարզապես հարստացնում է մեկին մյուսների հաշվին: Այս տեղեկությունները ձեռքին նա գնաց իր նախկին գործատու՝ Post-ի մոտ: Թերթը առաջարկեց նրան 5000 ԱՄՆ դոլար իր պատմության համար: 1920թ-ի օգոստոսի 2-ին ՄակՄաստերսը գրեց Post-ի

համար մի հոդված, որը խոսում էր Պոնցիի անհույս սնանկության մասին: Հոդվածն ասում էր, որ մինչդեռ Պոնցին հայտարարում էր, որ ունի 7 միլիոն ԱՄՆ դոլարի արագ իրացվելի միջոցներ, իրականում նա ունի առնվազն 2 միլիոն ԱՄՆ դոլարի պարտք: Հաշվի առնելով տոկոսները, գրում էր ՄակՄաստերսը, Պոնցին հավաքել էր 4.5 միլիոնի պարտք: Այս պատմությունը մեծ իրարանցում առաջացրեց, և Պոնցին մեկ օրում մարեց պարտքերը: Այնուհետև նա արագացրեց իր ծրագրերը՝ կապված խոշոր կոնգլոմերատ կառուցելու հետ, որը կներգրավվեր բանկային և ներմուծման-արտահանման գործարքների մեջ:

Սակայն, փորձանքը եկավ անսպասելի ճանապարհով: Պոնցիի բանկային գործունեության սկզբնական հետաքննությունը որևէ անօրինական բան չէր հայտնաբերել, սակայն Մասաչուսեթսի բանկի ղեկավարը՝ Ջոզեֆ Ալենը, վախճնում էր, որ գումարների մասսայական հանման դեպքում Պոնցիի պաշարները կսպառվեն: Այդ դեպքում Բոսթոնի ամբողջ բանկային համակարգը կթայթայվեր: Երբ Ալենը հայտնաբերեց, որ Պոնցիի կառավարման տակ գտնվող հաշիվները ստացել են ավելի քան 250000 ԱՄՆ դոլարի վարկ, նա հանձնարարեց բանկային երկու քննիչների ուշադրությամբ հետևել Պոնցիի հաշիվներին: Օգոստոսի 9-ին նրանք հայտնեցին, որ Պոնցիի հիմնական հաշիվը գրեթե գերազանցվել է: Այդ ժամանակ Ալենը հանձնարարեց Hanover Trust ընկերությանը այլևս չվճարել որևէ վճարագիր Պոնցիի հիմնական հաշվից: Նա նաև կազմակերպեց, որ Պոնցիի որոշ փոքր ներդրողներ գրանցեն իրենց հարկադրական անվճարու-նակությունը: Սա ստիպեց նահանգի Գլխավոր դատախազ Ուեստոն Ալենին հայտարարել, որ Պոնցիի լայնածավալ գործարքները փոստային կտրոնների հետ որևէ լուրջ կերպ հիմնավորված չեն: Այնուհետև պաշտոնյաները հրավիրեցին Պոնցիի տրված մուրհակների իրավատերերին Մասաչուսեթսի Կառավարու-թյուն, որպեսզի նրանք գրանցեն իրենց անունները և հասցեները հետաքննության նպատակներով: Այդ նույն օրը Պոնցին ստացավ Փրայդի աուդիտի նախնական զեկույցը, ըստ որի նա ուներ առնվազն 7 միլի-ոնի պարտք:

Օգոստոսի 11-ին Պոնցիի մոտ ամեն ինչ փլուզվում էր: Նախ, Post-ը առաջին քննարկեց հոդված նրա 13 տարի առաջ Մոնրեալում ծավալած գործունեության մասին, ներառյալ բանտարկումը կեղծված փաստաթղթի համար և Չառոսսիի սկանդալային բանկի պատմությունների մեջ իր դերի մասին: Կեսօ-րին Բանկի ղեկավար Ալենը կալանքի տակ վերցրեց Hanover Trust-ը՝ գտնելով նրա հաշվապահական գրքերում բազմաթիվ անօրինականություններ:

Իմանալով, որ նա կարող է ձերբակալվել ցանկացած օր, օգոստոսի 12-ին Պոնցին հանձնվեց դաշնային իշխանություններին և մեղադրվեց փոստային խարդախության մեջ: Նա մարդկանց նամակներ էր ուղար-կում, ասելով, թե նրանց մուրհակների մարման ժամկետը եկել է: Նա ազատվեց 25000 ԱՄՆ դոլար գրա-վի դիմաց, սակայն երբ Post-ը հրապարակեց Պոնցիի աուդիտի արդյունքները, երաշխավորը ետ վերցրեց գրավը՝ վախճնալով, որ Պոնցին կդիմի փախուստի:

Նորությունները բացի Hanover Trust-ից, հարվածեցին ևս հինգ բանկի: Նրա ներդրողները պարզապես ջախջախված էին. ստանալով 30 ցենտ մի դոլարի դիմաց: Post-ը 192 լթ-ին շահեց Պուլիցերի Մրցանակը Պոնցիի խարդախությունը ի հայտ բերելու համար:

## Բանտը և հետագա կյանքը

Այսպիսով Պոնցին մեղադրվեց փոստային խարդախության 86 կետերով: 1920թ-ի նոյեմբերի 1-ին նա իրեն ճանաչեց մեղավոր՝ փոստային խարդախության միայն մեկ կետով, դատավոր Կլերենս Յեյլիի առջև, որը վճիռը կայացնելուց առաջ ասեց, «Այս մարդը մի սխեմա էր հորինել, որի միջոցով խաբում էր տղա-մարդկանց և կանանց, և նա պետք է ստանա խոշոր պատիժ:» Պոնցին դատապարտվեց հինգ տարվա դաշնային բանտարկության:

Նա ազատ արձակվեց երեք ու կես տարի հետո և գրեթե անմիջապես մեղադրվեց Մասաչուսեթս նահանգի օրենքի գողության 22 կետերով: Այս մեղադրանքները աաշեցրեցին Պոնցիին: Նա մտածում էր, թե ճա-նաչելով իր մեղքը դաշնային մեղադրանքներով, նա այլևս չի մեղադրվի նահանգի կողմից: Պոնցիի գործը հասավ մինչև Գլխավոր Դատարան: 192 լթ-ին Գլխավոր Դատարանը որոշում կայացրեց, որ մեղքի ճա-նաչումը դաշնային մեղադրանքներով որևէ կապ չունի նահանգի մեղադրանքների հետ և, որ Պոնցին չի

ենթարկվում կրկնակի պատասխանատվության, քանի որ Մասաչուսեցը մեղադրում է նրան գողության մեջ, մինչդեռ դաշնային կառավարությունը մեղադրում էր նրան փոստային խարդախության մեջ (անգամ եթե այս մեղադրանքները վերաբերում էին նույն հանցագործությանը):

1922թ-ի հոկտեմբերին նա դատվեց գողության առաջին տաս կետերով: Քանի որ նա սնանկ էր, Պոնցին հանդես էր գալիս որպես սեփական փաստաբան: Պոնցին կիրառեց համոզելու իր բոլոր հմտությունները և ատենակալները ճանաչեցին իրեն անմեղ, մեղադրանքի բոլոր կետերով: Երկրորդ անգամ նա դատվեց ևս հինգ կետով, սակայն այս անգամ ատենակալները չէկան միասնական որոշման: Երրորդ անգամ նա ճանաչվեց մեղավոր և դատապարտվեց լրացուցիչ յոթից ինը տարվա բանտարկության:

Երբ լուրեր տարածվեցին, որ Պոնցին երբևիցե ձեռք չի բերել ամերիկյան քաղաքացիություն (չնայած, որ ապրել էր այնտեղ 1903թ-ից գրեթե միշտ), դաշնային իշխանությունները 1922թ-ին փորձեցին ձեռնարկեցին վտարել նրան որպես անցանկալի օտարերկրացու:

Պոնցին ազատվեց գրավի դիմաց, քանի որ նա բողոքարկել էր դատարանի որոշումը: Նա մեկնեց Սպրինգֆիլդ, Ֆլորիդա և բացեց այնտեղ Charpon Land Syndicate ընկերությունը, որը 1925թ-ի սեպտեմբերին առաջարկում էր ներդրողներին հողի չնչին տարածքներ, մի մասը ջրի տակ, և խոստանում էր 200 տոկոս եկամուտ 60 օրում: Իրականում դա հերթական խաբեություն էր, որը վաճառում էր Կոլումբիայի շրջանում գտնվող ճահճոտ տարածքներ:



Նոյեմբեր 1925

Պոնցին դատվեց Դուվալի շրջանի ատենակալների կողմից 1926թ-ի փետրվարին և մեղադրվեց Ֆլորիդայի արժեթղթերի մասին օրենսդրությունը խախտելու համար: Նա ճանաչվեց մեղավոր և դատապարտվեց մեկ տարվա բանտարկության Ֆլորիդա նահանգի բանտում: Նա բողոքարկեց վճիռը և ազատվեց 1500 ԱՄՆ դոլար արժողությամբ պարտատոմսի դիմաց: Պոնցին մեկնեց Տամպա, որտեղ սափրեց գլուխը, բեխեր աճեցրեց և փորձեց փախչել երկրից, Իտալիա ուղեվորով առևտրային նավի նավապետի կերպարանքով: Սակայն նրան բռնեցին Նոր Օռլեանում և ետ ուղարկեցին Մասաչուսեց կրելու իր պատիժը: Պոնցին բանտում նստեց ևս յոթ տարի:

Այդ ժամանակ, պետական հետաքննիչները փորձում էին հասկանալ Պոնցիի խճճված հաշիվները պարզելու համար, թե ինչքան գումար է նա վերցրել և ուր է այն գնացել: Նրանք երբեք էլ չպարզեցին այս հարցերը և միայն կարողացան եզրակացնել, որ իր ձեռքերով անցել են միլիոններ:

Պոնցին բանտից դուրս եկավ 1934թ-ին: Ազատվելուն պես նա ստացավ մի փաստաթուղթ իրեն անմիջապես Իտալիա վտարելու հրամանով: Նա ներում խնդրեց Նահանգապետից, սակայն հուլիսի 13-ին ստացավ մերժում: Պոնցին այլևս չէին վստահում, և բանտից դուրս գալուց նա բախվեց կատաղած ամբոխին: Մեկնելուց առաջ նա ասաց լրագրողներին, «Ես փորձանք էի փնտրում և ես գտա այն»:



ԱՄՆ-ից վտարելուց 1934թվ

Իտալիայում Պոնցին մեկը մյուսի հետևից տարբեր սխեմաներ էր գործածում, սակայն մեծ բան դուրս չէր գալիս: Բենիտո Մուսոլինին նրան աշխատանք տվեց կառավարության ֆինանսական բաժնում: Սակայն նա այնքան վատ էր կառավարում գործերը, որ ստիպված էր փախչել Զարավային Ամերիկա: Իհարկե միևնույն փախչելը նա հասցրեց վերցնել անհայտ գումար Իտալիայի գանձարանից:

Ի վերջո նա աշխատանք գտավ Բրազիլիայում, որպես Ala Littoria իտալական ավիատուղիների գործակալ: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Բրազիլիան միացավ Անտանտային և ավիատուղիների գործունեությունը երկրում դադարեցվեց:

## Մահը

Կյանքի վերջին տարիները Պոնցին անցկացրեց աղքատության մեջ՝ ժամանակ առ ժամանակ աշխատելով որպես թարգմանիչ: Նրա առողջությունը վատ վիճակում էր. 1941թ-ին նա տարել էր սրտի նոպա, որը լրջորեն թուլացրել էր իրեն: Տեսողությունը նույնպես լավ չէր: 1948թ-ին նա գրեթե կույր էր, իսկ ուղեղի արնահոսությունը պարալիզացրել էր աջ ոտքը և ձեռքը: Նա մահացել է 1949թ-ի հունվարի 18-ին, Ռիո դե Ժանեյրոյի բարեգործական հիվանդանոցում:

Բարեգործական հիվանդանոցում Պոնցին տվեց իր վերջին հարցազրույցը ամերիկացի լրագրողին: «Առանց նախապես ծրագրված չար դիտավորության նրանց ես ցույց տվեցի լավագույն շոուն, որը նրանք տեսել էին պիլիգրիմներից հետո:» Տարիներ շարունակ իր անմեղությունը ապացուցելուց հետո, նա նաև ճանաչեց իր մասնակցությունը խաբեության մեջ:



*Կյանքի վերջին տարիներին հիվանդանոցում*